

MasterCard UEFA Champions League ՔԱՐՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հիմնական հասկացություններ

«Բանկ» - «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ,

«Քարտ(եր)» - «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող MasterCard UEFA Champions League տեսակի քարտ(եր),

«Քարտապան» - ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, ում անունով Բանկը բացել է Քարտային հաշիվ,

«Քարտային հաշիվ» - Բանկային հաշիվ, որից հնարավոր է օգտվել Քարտի միջոցով,

«Վճարային Գործառնություն» - Քարտով կատարված անկանխիկ գործառնություն,

«Պարզևատրում» - Քարտով կատարված վճարային գործառնությունների գումարի դիմաց սույն պայմաններով սահմանված կարգով Քարտապանին տրամադրվող UEFA Champions League լոգոտիպը կրող ապրանքատեսակ, որը ներկայացված է www.uefa.com կայքի առցանց խանութում:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Քարտի ձեռքբերումը ենթադրում է լիարժեք համաձայնություն Քարտի հետ համատեղ իրականացվող «Պարզևատրումների ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման պայմաններին:

2.2. Ժամկետանց պարտավորություն և/կամ Քարտի սպասարկման միջնորդավճարի պարտավորություն ունենալու դեպքում Ծրագիրը հասանելի չէ քարտապանի համար՝ մինչ վերջինիս կողմից պարտավորությունների մարումը:

2.3. Ծրագիրը հասանելի է քարտապանի համար քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում: Քարտի գործողության ժամկետի ավարտի պահից առավելագույնը 3 (երեք) ամսվա ընթացքում Քարտը վերաթողարկելու դեպքում նախկինում կատարված այն գործառնությունները, որոնց համար դեռևս պարզևատրման պատվեր չի կատարվել, պահպանվում են և փոխանցվում վերաթողարկված քարտի վրա:

2.4. Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել կամ ձևափոխել Ծրագիրը:

2.5. Գործառնությունը Ծրագրում հաշվարկվում է Բանկի կողմից գործառնության ստացումից և Քարտապանի Քարտային հաշվին ձևակերպելուց հետո:

2.6. Դրամային արժույթով քարտերով արտարժույթային վճարային գործառնություն կատարելու դեպքում Ծրագրի շրջանակներում վճարային գործառնության հաշվարկման հիմք է հանդիսանում քարտային հաշվից գանձված վճարային գործառնության գումարը՝ արտահայտված ՀՀ դրամով:

2.7. Դոլարային կամ եվրո արժույթով քարտերով արտարժույթային վճարային գործառնություն կատարելու դեպքում Ծրագրի շրջանակներում վճարային գործառնության հաշվարկման հիմք է հանդիսանում քարտային հաշվից գանձված վճարային գործառնության գումարը՝ վերածված ՀՀ դրամի տվյալ օրվա դրությամբ Բանկի կողմից իրականացվող արտարժույթային փոխարժեքով:

2.8. Ծրագրին մասնակցությունը չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճարներ կամ միջնորդավճարներ:

2.9. Ստորև նշված գործառնությունները չեն հաշվարկվում Ծրագրի շրջանակներում.

ա) կանխիկացման գործառնություններ,

բ) կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ,

գ) Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ,

դ) քարտից քարտ, ինչպես նաև դեպի այլ հաշիվներ փոխանցումներ,

ե) էլեկտրոնային դրամապանակների լիցքավորումներ (Idram, Mobidram, PayPal, Skrill, Web Money, Yandex Money և այլն),

զ) բուքմեյքերական գրասենյակներում, խաղատներում և տվյալ ոլորտի այլ սպասարկման կետերում կատարված վճարումներ՝ ներառյալ օնլայն վճարումներ,

է) բջջային օպերատորների գրասենյակներում վճարումներ

4. Գործառնությունների կատարում և պարզևատրումների ստացում

4.1. Քարտապանի կողմից կատարված յուրաքանչյուր վճարային գործառնություն (բացառությամբ 3.10 կետով սահմանված գործառնությունների) հաշվարկվում է Պարզևատրման համար անհրաժեշտ գործառնությունների ծավալը հաշվարկելիս:

4.2 Պարզևատրումները գնանշված են www.uefa.com կայքի առցանց խանութում:

4.3 Քարտապանի պարզևատրման գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

4.3.1. Դոլարային արժույթով քարտերի համար՝ Քարտապանի կողմից կատարված վճարային գործառնությունների հանրագումարի 1%-ի չափով, ընդ որում այս դեպքում Քարտապանը www.uefa.com կայքի առցանց խանութում որպես գնանշման արժույթ պետք է ընտրի ԱՄՆ դոլարը:

4.3.2 Եվրո արժույթով քարտերի համար՝ Քարտապանի կողմից կատարված վճարային գործառնությունների հանրագումարի 1%-ի չափով, ընդ որում այս դեպքում Քարտապանը www.uefa.com կայքի առցանց խանութում որպես գնանշման արժույթ պետք է ընտրի եվրոն:

4.3.3 ՀՀ դրամով քարտերի համար՝ Քարտապանի կողմից կատարված վճարային գործառնությունների հանրագումարի 1%-ի չափով, ընդ որում այս դեպքում Քարտապանը www.uefa.com կայքի առցանց խանութում որպես գնանշման արժույթ պետք է ընտրի ԱՄՆ դոլարը, իսկ կատարված վճարային գործառնությունների գումարը փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ 1(մեկ) ԱՄՆ դոլարի դիմաց հաշվարկելով ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկայում ՀՀ դրամի ձևավորված միջին շուկայական փոխարժեքը:

4.4 Այն գործառնությունների գումարը, որոնց դիմաց Քարտապանը ստացել է պարզևատրում, չեն ընդգրկվում պարզևատրման գումարի հաշվարկում:

4.5 Պարզևատրումը պատվիրելու համար Քարտապանը պետք է զանգահարի Բանկի շուրջօրյա սպասարկման կենտրոն (010) 31 88 99 հեռախոսահամարով և հայտնի իր կողմից ընտրված պարզևատրման տվյալները:

4.6 Քարտապանի կողմից ընտրված ապրանքատեսակի գնման, բեռնափոխադրման և մաքսագերծման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Բանկը:

4.7 Քարտապանների կողմից հավաքագրված պատվերները Բանկի կողմից իրականացվում են յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում և հանձնվում վերջիններիս պատվիրման օրվանից առավելագույնը 2 ամսվա ընթացքում: Ընդ որում, Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում քարտապանի կողմից ընտրված պարզևատրման պատվերի կատարման պահին հասանելիության համար: Պատվերի կատարման պահին վերջիններիս անհասանելի կամ անբավարար լինելու դեպքում Բանկը Քարտապանին առաջարկում է այլ ընտրություն կատարել: